Արձանագրություն N 4
ՀՀՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13 նոյեմբերի 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Դուրգարյանը
անդամներ՝ Հ. Վանյանը, Ս. Սարգսյանը
քարտուղար՝ Ա. Ասատրյանը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Մ. Դուրգարյան)

1. 1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում «Դամկար» ՍՊԸ-ն և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն ներկայացրել են հրավերով սահմանված Հավելված 2-ի շտկված տարբերակը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ «Դամկար» ՍՊԸ-ի և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից իրականացրած գնահատումը հանձանաժողովը որոշեց.

ա) «Դամկար» ՍՊԸ-ի և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 1-4-րդ և 10-րդ չափաբաժինների համար:

բ/ «Դամկար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 5-րդ, 8-րդ, 9-րդ, 11-13-րդ չափաբաժինների

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մ. Դուրգարյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Մ. Դուրգարյան

անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Ս. Սարգսյան

քարտուղար՝

_____ Ա. Ասատրյան